Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

93
214

Luy
346

ԽՕՍՈՂ, ԿԱՂՆԻ

ԺՕՐԺ—ՍԱՆԴ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Թարգմանեց

ԱՂ. ՏԷՐ—ՄԿՐՏՉԵԱՆՑ

երկու պատկերով

ԹԻՖԼԻԶ

Ի տպարանի Համբարձումայ Էնֆիաճեանց եւ Ընկեր.

1877

120
1537

Հայ
346
120шт
~~А266~~
ЛАЗАРЕВСКІЙ ИНСТИТУТЪ
УЧЕБНАЯ БИБЛІОТЕКА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ
УЧЕБНАЯ БИБЛІОТЕКА
ЛАЗАРЕВСКІЙ ИНСТИТУТЪ
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ
1010
40834

ԽՕՍՈՂԿԱՂԵԼ

ԺՕՐԺ—ՍԱՆԴ

Թարգմանեց

ԱՂ. ՏԷՐ—ՄԿՐՏՉԵԱՆՑ

երկու պատկերով

ԹԻՖԼԻԶ

Ի տպարանի Համբարձումայ Էնֆիաճեանց եւ Ընկեր.

1877

Дозволено Цензурою. Тифлисъ. 26 Апрѣля 1877 г.

29-345

346-2003

«Սիրտս ուզում էր պատռի, որ էս երեխեքանց ձեռքն «էլ՝ ինչ Հայի գիրք տալիս էի, չին հասկանում։ Ռուսի, Նեմեցի, «Ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց ան-«մեղ հոգուն էլ էին էնպէս բաները դիր գալիս...»
(Վէրք Հայաստանի երես 5)։

Այս տողերը ասած են մեզանից դեռ մի կէս դար առաջ ապրող Հայերի համար։ բայց ով արդեօք չի վկայի, որ նոյնը կրկնվում է և այսօր։ Ահա այդ տողերն էին, որ իմ մէջ զարթեցրին այս միտքը և ես առաջին անգամ Թարգմանեցի Ժորժ—Սանի խօսող կաղնի անունով փոքրիկ վէպը իբրև երախայրիկ իմ աշակերտական տարիների, յուսալով որ դուք, իմ ազնիւ ընթերցողներ, սիրով կը կարդաք ձեր մայրենի լեզուով գրածն էլ։

Թարգմանիչ։

Սերնաս անտառի մէջ կար 500 տարեկան մի հաստ և ծեր կաղնի։ Կայծակը շատ անգամ խփել էր նորան, կոտրատել էր գլուխը, այնպէս որ կարծես կտրած լինէր և ծածկուած էր կանաչ խոտով։ Երկար ժամանակ այս կաղնու վերայ լաւ չէին խօսում։ Մօտիկ գիւղի ծերերը և պառաւները պատմում էին՝ թէ իրանց մանկութեան ժամանակ այս կաղնին խօսում ու վախեցնում էր նրանց, ովքեր ուզում էին ամառ ժամանակ հանգստանալ նորա ստուերի տակ։ Նրանք պատմում էին, որպէս թէ կայծակը երկու ճանապարհորդի խփել էր նրա տակ, որոնցից մէկը մեռել էր տեղն ու տեղը, իսկ միւսը ուշաթափուած՝ հազիւ կարողացել էր փախչել և մի ձայն նորան զգուշացրել էր ասե-

լով. ,,Հեռացիր շուտով այստեղից''։

Այս մի այնպիսի հին պատմութիւն էր, որ ոչ ոք այլ ևս չէր հաւատում։ Թէպէտ դեռ ևս նորան ասում էին խօսող կաղնի, այնու ամենայնիւ հովիւները առանց վախենալու մօտենում էին։

Նորա կախարդութեան հաւատացին աւելի այն ժամանակ, երբ պաաահից Էմմի անցքը։

Էմմին մի փոքրիկ, որբ և անբաղդ խոզարած էր։ Անբաղդ էր ոչ թէ նորա համար, որ վատ էր մեծացած, վատ հագնուած և աղքատ խրճթի տէր, այլ գլխաւորապէս նորա համար, որ համբերութիւն չունէր վազվզել կենդանիների ետևից։ Նա վախենում էր խոզերից. նրանք էլ այդ լաւ էին հասկանում. դու այդպէս մի՛ տես նրանց, շատ խորամանկ են նրանք։

Նա առաւօտը վաղ գնում էր նրանց հետ անտառը, ուր կային շատ կաղիններ և երեկոյեան կրկին յետ էր բերում ագարակը։

Մարդու լացն էր գալիս՝ երբ նայում էր

նորան-շորերը պատռտած, գլուխը բաց, մազերը քամուց դզդզած, նիհար և տխուր դէմքը ահից դողդողում էր, երբ քշում էր այս անզգամ կենդանիներին, որոնք գլխները կախարած նեղանում ու ճղճղում էին։ Նա առաւօտեան վաղ-վաղ վազում էր այս կենդանիների ետևից թփերի մէջ և հազար ու մէկ նեղութիւններ էր քաշում։

Այս աղքատ, փոքրիկ խոզարածը կը լինէր մի խելօք տղայ, եթէ նորա վերայ հոգային այնպէս, ինչպէս ձեզ վերայ, ի՛մ սիրելի ընթերցողներ։ Նա կարդալ չգիտէր. ոչինչ չէր հասկանում. հազիւ խնդրում էր իրան ամենահարկաւոր բաները, բայց որովհետև շատ վախկոտ էր, շատ անգամ և այդ էլ չէր համարձակվում խնդրել։ Նորա բանը աւելի վատ էր լինում այն ժամանակ, երբ մոռանում էին նորան։

Մի երեկոյ խոզերը միայնակ յետ դարձան տուն. իսկ փոքրիկ խոզարածը չերևաց։ Ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց դորա վերայ և հազիւ ընթրիքից յետոյ նկատեցին,

որ նա չկայ։ Կալուածատիրոջ կինն ուղարկեց մշակներից մէկին Էմմիին կանչելու, բայց մշակը վերադարձաւ և յայտնեց, որ Էմմին ոչ գոմումն է և ոչ սրահումը, որտեղ նա սովորաբար քնում էր խոտի վերայ։ Այնպէս կարծեցին՝ թէ նա գնացել է հօրաքրոջ մօտ, որ իրանց հարևանն էր և հանգիստ քնեցին առանց երկար մտածելու նորա վերայ։

Միւս օր առաւօտը գնացին նորա հօրաքրոջ մօտ և զարմացան, երբ իմացան՝ թէ Էմմին գիշերը այնտեղ չէր եղել։

Երեկ առաւօտուանից նորան այլ ևս ոչ ոք չէր տեսել գիւղում։ Շրջակայ տեղերում շատերից հարցրին, բայց ոչ ոք չէր տեսել նորան անտառում։ Վերջը մտածեցին՝ թէ անպատճառ գայլերը և վարազները կերած կը լինին նորան։

Ոչ մի տեղ չգտան ո՛չ նորա մտրակը, ո՛չ մտրակի կարճ կոթը, ինչպիսին սովորաբար գործ են դնում խոզարածները և ոչ մի կտոր նորա շորերից։ Սրանից հասկացան՝ թէ նա թողել է այդ երկիրը և գնացել է թափառելու։

Կալուածատէրը յայտնեց, որ պէտք չէ ափսոսալ նորա համար, որովհետև ոչ մի բանի պէտք չէր, չէր սիրում կենդանիներին և չէր էլ կարողանում նրանց իրա գլուխը սիրել տալ։

Ուրիշ հովիւ գտան, բայց Էմմիի անյայտանալը վախ ձգեց այդ կողմի տղաների սիրտը։ Վերջին անգամ նորան տեսել էին գնալիս խօսող կաղնու մօտ և անպատճառ այնտեղ պատահած կը լինէր նրան այդ անբաղդութիւնը։

Նոր խոզարածը երբէք իւր երամակը (խոզերը) չէր տանում այնտեղ և երեխաները էլ վախենում էին այնտեղից։

Դուք կուզէ՞ք իմանալ թէ ինչ եղաւ Էմմին։

Սպասեցէ՛ք, իսկոյն ես կը պատմեմ ձեզ, ի՞մ սիրելի ընթերցողներ։ Վերջին անգամ երբ անտառումն էր Էմմին՝ մեծ կաղնուց մի փոքր հեռու՝ նկատեց մի քանի ծաղկած

լօբու բոյսեր, որի պտուղները ընկուզի մեծութեամբ էին՝ փոքր ինչ կծու բայց շաքարահամ։ Խեղճ երեխաները շատ են սիրում այդ բոյսը։ Սորա պտուղները ոչնչի պէտք չեն, սրանց միայն խոզերն են ուտում։

Հին ժամանակներում անապատում բնակուողները, ինչպէս ասում են, կերակրվում էին սրանց արմատներով։

Ինչպէս երևում է այս բոյսի գլուխները դրանց աղքատ խոհանոցում հազուագիւտ կերակուր էր։

Էմմին շատ լաւ գիտէր, որ այդ գլուխները դեռ ևս չէր կարելի ուտել, որովհետև աշունքը նոր էր սկսել, բայց միայն ցանկանում էր նշանակել տեղն՝ որ յետոյ գայ և դուրս տայ արմատները, երբ ցողունները և ծաղիկները կը չորանան։ Այդ ժամանակ նորա ետևից գնաց խոզը, սկսեց քանդել գետինը և փչացնել լոբու արմատները։ Իսկ Էմմին նեղանալով չատակեր կենդանու վրայ՝ իւր մտրակով խփեց որքան ձեռուցն ոյժ ունէր։



Խոզը յուսահատած ճղճղաց։ Այս կենդանիները առհասարակ սովորութիւն ունին միմիանց պաշտպանելու և երբ իրանցից մէկը ճղճղում է, իսկոյն հասկանում են. յարձակւում են թշնամու վերայ, ազատում են իրանց ընկերոջ, և վրէժխնդիր լինում։ Իմմիի վերայ նրանք վազուց էին նեղացել, որովհետև նա չէր սիրում նրանց։ Նրանք բոլորն էլ ճղճղալով վազեցին, շրջապատեցին խեղճին և կամենում էին պատռտել։ Խեղճ երեխան փախաւ, խոզերն էլ նրան հետևեցին։ Զնայելով որ սոքա դանդաղաշարժ են երեւում, այնուամենայնիւ բաւականին արագաշարժ են։ Հազիւ թէ հասաւ հին կաղնուն, բարձրացաւ նորա վերայ և թաքնվեցաւ տերևների մէջ, երբ այդ կատաղած երամակը շրջապատեց ծառը՝ ճղճղալով և սկսեցին փորել արմատները։

Բայց խոսող կաղնու արմատները շատ հաստ էին և երամակը ոչինչ չ'կարողացաւ անել։ Այսպէս նրանք ի զուր աշխատեցին մինչև արեգակի մայր մտնելը։ Այն ժամա-

նակ վճռեցին յետ դառնալ և փոքրիկ Էմ-
մին հաւատացած էր, որ եթէ ինքը գնայ
նոցա հետ, անպատճառ իրան կը պատռտեն,
այդ պատճառով վճռեց այլ ևս երբէք չվե-
րադառնալ ագարակը։

Նա լաւ գիտէր, որ այս կաղնին յայտնի
էր իբրև կախարդուած ծառ, բայց խոզերը
նրան այնքան նեղացրել էին, որ նա այլ ևս
սատանաներից էլ չէր վախենում, ուր ճնաց
նրանից. բայց շատ անգամ սովը և հիւան-
դութիւնը նեղացնում էին նրան։ Հօրաքոյրը
նրա հետ շատ խստութեամբ էր վարվում.
նա ստիպում էր նորան խոզերն արածացնել,
որոնցից նա սաստիկ վախենում էր։ Այս
ահը բնական էր նրա համար և նա ձգեց
նրան յանցանքի մէջ։ Ամեն անգամ, երբ
խնդրում էր հօրաքրոջ, որ իրան տուն թող-
նէ, հայհոյում և ծեծում էր։

Նա շատ էր վախենում նրանից. շատ
ուրախ կը լինէր արածացնել ոչխարներ
մի ուրիշ կալուածում, որտեղի մարդիկը բա-
րի լինէին և իրա հետ սիրով վարուէին։

Ակզբում, երբ խոզերը հեռացան, նա
շատ բաւական էր, որովհետև ազատուեցաւ
նրանց կատաղի և ահալի ձայներից. նա վճ-
ռեց գիշերը անցկացնել ծառի վերայ։

Նորա պարկի մէջ դեռ ևս ճնացել էր
մի կտոր հաց, որովհետև երբ խոզերը նորա
վերայ յարձակուեցան, նա ամեն բան մո-
ռացաւ, մինչև անգամ հաց ուտելն էլ։ Նա
կերաւ իւր պաշարի կէսը, իսկ միւս կէսը
պահեց նախաճաշի համար և իրան յանձնեց
Աստուծոյ կամքին։

Ամեն տեղ երեխաները քնած են հան-
գիստ, բայց Էմմին շատ վատ քնեց. նա
տկար էր. շուտ շուտ ջերմում էր. դէլն էր
տալիս, և թէև մի փոքր աչքը կպցրեց, մի-
այն չկարողացաւ դորանով ևս ազատուել ցա-
ւից։

Նա լաւ տեղաւորեց երկու ամուր և
մամռապատ ճիւղերի վերայ. կամենում էր
քնել, բայց քամին շարժում էր տերևները
և ճիւղերի ճռճռոցից վախենում։ Նա սկը-
սեց չար ոգիների (դևերի) վրայ մտածել և

այս մտքերը այնպէս սաստիկ ներգործեցին նորա վերայ, որ կարծես թէ լսում էր մի բարակ ձայն, որ ասում էր. ,,Հեռացի՛ր, հեռացի՛ր այստեղից''։

Այս ձայնը մի քանի անգամ կրկնուեց։ Առաջ Էմմին բոլորովին չը կամեցաւ պատասխանել. նա դողդողում էր. բերանը չորանում, բայց երբ քամին հանդարտուեց՝ կաղնու ձայնն էլ մեղմացաւ և կարծես թէ նորա ականջում փսփսաց մայրական ձայնով. ,,Հեռացի՛ր, Էմմի, հեռացի՛ր''։ Այն ժամանակ նա հաւաքեց իւր բոլոր ոյժը և պատասխանեց կաղնուն. ,,Մի՛ դուրս անիլ ինձ, իմ աղնիւ կաղնի, եթէ ես ցած իջնեմ այս տեղից, ինձ կուտեն գայլերը, որոնք այստեղ մոն են գալիս գիշերով''։ ,,Հեռացի՛ր, Էմմի, հեռացի՛ր'', աւելի մեղմ կրկնեց ձայնը։ ,,Իմ աղնիւ կաղնի'' ասաց Էմմին աղաչելով, ,,մի՛ ուղարկիր ինձ գայլերի մօտ, դու աղատեցիր ինձ խոզերից, դու բարի էիր մինչև հիմայ, այժմ էլ բարի եղի՛ր։ Ես մի խեղճ և անբաղդ տղայ եմ. ես չեմ ցան-

կանում և չեմ էլ կարող քեզ վատութիւն անել. թո՛յլ տուր ինձ ճնալ այս գիշեր քեզ վերայ, իսկ վաղը, եթէ կը հրամայես ինձ, ես կը գնամ''։ Այս ձայնը այլ ևս չկրկնուեց և լուսինը բարձրանալով երկնքի վերայ՝ լուսաւորեց տերևները։ Էմմին այնպէս կարծեց՝ թէ իրան թոյլ տուեց ճնալ կամ թէ չէ նա երազում լսեց այս բոլոր խօսքերը։ Նա քնեց։

Զարմանալի՞ բան. ոչ մի երազ չտեսաւ և հանգիստ քնեց մինչև առաւօտ։ Այն ժամանակ ցած իջաւ ծառից և թափ տուեց ցօղոտած հին շորերը։ Թէ այսպէս և թէ այնպէս ես պէտք է յետ դառնամ գիւղը, ասաց նա ինքն իրան. հօրաքրոջս կասեմ, որ խոզերը ուզում էին ինձ ուտել և ես ստիպուած էի գիշերը անցկացնել ծառի վերայ և նա թոյլ կը տայ ինձ մի ուրիշ գործ գտնել։

Նա կերաւ իւր հացը և ճանապարհ ընկաւ դէպի գիւղ. կամեցաւ չնորհակալութիւն անել կաղնուն, որ պահպանել էր իրան ճիւղերի մէջ մի օր ու գիշեր։-,,Շնորհակալ եմ

քեզանից, իմ ազնիւ կաղնի, մնաս բարև“, ասաց նա համբուրելով նրա կեղևը, „ես այլ ևս չեմ վախենալ քեզանից. ես էլի մի օր կը գամ քեզ մօտ շնորհակալութիւն անելու“: Նա անցաւ սպիտակ ծաղիկների միջով և ճանապարհ ընկաւ դէպի իւր հօրաքրոջ խըրճիթը, երբ լսեց ագարակի ցանգից մի ձայն:

„Այսուամենայնիւ“, ասաց մշակներից մի երեխայ, մեր խոզարածը չվերադարձաւ, նորան չեն գտել իւր հօրաքրոջ մօտ և նա թողել է իւր երամակը: Այդ անպիտանին ես մի լաւ կը պատժեմ նորա համար, որ ստիպում է ինձ այսօր իրա փոխանակ գնալ խոզերի ետևից“:

„Ի՞նչ մի նեղութիւն է քեզ՝ որ տանես խոզերը արածացնելու“, ասաց մի ուրիշ երեխայ:

„Իմ հասակի տղերանց այդ մեծ ամօթ է“, պատասխանեց առաջինը, „այդ միայն կարելի է տասը տարեկան երեխաներին, ինչպէս Լիմին էր, բայց ես որ տասներկու տարեկան եմ, իրաւունք ունիմ արածացնել կովեր կամ թէ չէ՝ գոնեայ հորթեր“:

Այս խօսակցութիւնն ընդհատուեց:

„Շո՛ւտ արէք ձեր գործին գնացէք“, ձայն տուեց նրանց հայրը: „Իսկ այն անպիտան խոզարածին հենց տեղն է, որ գայլերը կերել են, եթէ ձեռքս ընկնի, ես նրան սաղ-սաղ կը սպանեմ: Թո՛ղ այն ժամանակ նա գնայ և իւր հօրաքրոջ գանգատուի. ես գիտեմ նա նորան խոզերի հետ ինքնացնէ, որպէս զի սովորի պրել խոզերին և չզզուել նրանցից“:

Լիմին, երբ լսեց այդ խօսքերը, վախեցաւ և թաքկացաւ:

Նա մտաւ ցորենի բարդի (տանեակ, փենջայ) մէջ և այնտեղ անցկացրեց ամբողջ օրը: Երեկոյեան մի այծ, որ վերադառնում էր տուն, կանգնեց այնտեղ փոքր ինչ խոտ ուտելու և թոյլ տուեց Լիմին իրան կթելու: Երբ լցրեց իւր փայտէ ամանը և խմեց կաթը, նա աւելի ևս խորը մտաւ խրձերի մէջ և այնտեղ մնաց մինչև գիշեր: Երբ մթնեց և ամենքը պառկեցին քնելու, կամաց մտաւ բա-

ЛАЗАРЕВСКІЙ ИНСТИТУТЪ ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

կը և վեր առաւ իրա բանները և մի քանի ռուբլի էլ իւր աշխատած փողից, որ ստացել էր իւր կալուածատիրոջ կնկանից մի քանի օր առաջ։ Հօրաքոյրը չգիտէր, եթէ ոչ կը վերառնէր։ Նա վեր առաւ իրա հետ նը-մանապէս այծի և ոչխարի մորթիներ ձմեռուայ համար, նոր դանակ, փոքրիկ կաւէ աման և մի ձեռք հագուստ։ Այս բոլորը դարսեց պարկի մէջ, բարձրացաւ ցանկից, և կամենում էր հեռանալ ծածուկ։ Բայց երբ անց էր կենում խոզերի գոմի մօտից, այս անպիտան կենդանիները ճանաչեցին իրանց առաջուայ հովուին և սկսեցին ճղճղալ։

Այն ժամանակ Էմմին վախեցաւ, որ չլինի թէ ագարակում մի մարդ զարթնէ այդ ճղճղոցից և հետևէ իրան, այդ պատճառով սկսեց վազել և կանգնեց միայն խօսող կաղնու մօտ։ ,,Ահա՛ ես կրկին վերադարձայ, ի՛մ աղնիւ բարեկամ՛՛, ասաց նա։ ,,Թո՞յլ տուր մի գիշեր ևս քնել քո ճիւղերի մէջ. ասա՛, թո՞յլ ես տալի՛՛։ Կաղնին չպատասխանեց։ Եղանակը շատ հանդարտ էր և ոչ

մի տերև չէր շարժվում։ Էմմին մտածեց՝ թէ լռութիւնը համաձայնութեան նշան է։ Այն ժամանակ իւր բեռնով բարձրացաւ մինչև այն տեղը, ուր քնել էր անցեալ գիշեր։ Այս-տեղ նա շատ քաղցր քնեց։

Երբ լուսացաւ, Էմմին մտածեց գտնել մի յարմար տեղ, ուր կարողանար թաղցնել իւր փողերը և իւր մնացած բանները, բայց որովհետև նա դեռ ևս ոչ մի բան չէր մտածել՝ թէ ի՞նչ կերպով կարողանար ծածուկ հեռանալ, որ ոչ ոք չիմանայ և կրկին անգամ չվերադարձնի իրան ագարակը։ Նա բարձրացաւ ծառը և նորա գլխին գտաւ սև փոսեր, որ ծակել էր կայծակը և ինչպէս ելևում էր, այդ շատ ժամանակուայ էր, որովհետև փոսերի չորս կողմն արդէն հաստ կեղևով ծածկուել էր։

Այս փոսի յատակում կար մոխիր և մանր փայտի կտորներ, որոնք պոկուել էին ծառից։

,,Ահա՛ փափուկ և տաք անկողին՛՛, մտածեց երեխան՛՛, այստեղ ես լաւ կը քնեմ և

այնտեղից էլ չեմ վեր ընկնիլ ներքև։ Նա թէև շատ մեծ չէ, բայց բաւական է ինձ համար։ Այսուամենայնիւ հարկաւոր է նայել՝ թէ չի՞ բնակվում արդեօք այնտեղ մի որ և իցէ գազան՝՝։

Նա մոտիկ տուեց ծառի փչակի ամեն կողմերը և նկատեց, որ վերևից ճաքել է և այնտեղից անձրևի ժամանակ կարող է կաթել և կամեցաւ այդ ճաքը մամուռով ծածկել։ Բուն այնտեղ էր չինել իւր բոյնը։ ,,Ես քեզ չեմ քանդի՝՝, ասաց Էմիլին, ,,բայց կը կըտրեմ իմ բարեկամութիւնը քեզանից, ուրեմն ամեն մարդ իւր համար իրա տան մէջ կը մնի՝՝։

Երբ նա պատրաստեց իւր համար քնելու տեղ միւս գիշերուայ համար և իւր բաները տեղաւորեց, մտաւ իւր տունը և ոտները կախարեց մոտիկ ճիւղի վերայից։

Նա չփոթուեց և մտածում էր՝ թէ ինչպէս պէտք է ապրի ծառի մէջ։ Յանկանում էր՝ որ այս ծառը լինէր անտառի մէջ տեղում և ոչ թէ ափում՝ հովիւների և խոզարածների աչքի առաջ, որոնք բերում էին այդ տեղ իւրեանց երամակներն և հօտերը։ Նա չէր իմանում դեռ ևս, որ այս ծառից, իրա անյայտանալուց յետոյ, ամենքն էլ վախենում էին և ո՛չ ոք չէր համարձակվում մօտենալ նրան։

Այսու ամենայնիւ քաղցածութիւնը նրան ստիպեց և թէպէտ այնքան մեծ ախորժակ չունէր, բայց զգաց՝ որ այս մի օրէ ինչ՝ ո՛չ մի սննդարար բան չի կերել։ Նա մտածում էր ինքն իրան. ,,Չգնա՞մ արդեօք մոտիկ տեղի գետնախնձորը հանեմ, կամ թէ չգնա՞մ արդեօք շագանակի ծառերի մօտ, որոնք անտառի մէջ տեղումն էին՝՝։

Հենց նա ուզում էր ցած իջնել ծառից, նկատեց որ այն ճիւղը, որի վրայ դրել էր իւր ոտները, կաղնունը չէր։ Այս հարևան ծառը փաթաթել է խոսող կաղնու ճիւղերի հետ իւր ամուր և գեղեցիկ ճիւղերը։ Էմիլին հեշտութեամբ այս ճիւղերից անցկացաւ միւս մոտիկ կաղնու վերայ, որտեղից կարողացաւ հեշտ կերպով առաջ գնալ։

40834

Արագաշարժ և թեթև երեխան, ինչպէս մէկ սկիւռ, անցկացաւ մի ծառից միւսը, հասաւ մինչև շագանակի ծառը և քաղեց այնքան, ինչքան ինքը կամենում էր։ Նրանք դեռ ևս փոքր էին և չէին հասած, բայց նա դորա վրայ չէր մտածում։ Ցած իջաւ ծառից և ուզում էր եփել մի ծածուկ տեղում՝ փոսի մէջ, որտեղ ածխագործները վառարաններ էին շինել։ Փոսի չորս կողմում բուսած էին թփեր, իսկ նրա մէջ երևում էր այրուած ծառի մի մասը։

Շուտով Էմմին իւր դանակով մաքրեց այդ վառարանը, կրակ արեց կայծաքարով (չախմախ քար) և այսպիսով վառեց չորացած տերևները։ Այստեղ նա կամեցաւ ժողովել իւր համար կերակուր, որովհետև այդ անտառի ծառերի վրայ շատ կար։ Մօտիկ տեղի աղբիւրը նրան օգնեց եփել շագանակը իւր կաւէ ամանի մէջ։ Այս ամանը շինուած էր շագանակ եփելու համար։ Այն երկրում, ամեն մի հովիւ պահում է իւր մօտ այդպիսի մի աման։

Առհասարակ Էմմին վերադառնում էր ագարակը երեկոյեանները և որովհետև նա իւր երամակը հեռու տեղեր էր տանում արածացնելու, այդ պատճառաւ նա սովորեց ինքն իրա համար կերակուր եփել. ժողովում էր իւր համար հովիտներում բուսած քաղցր մորիները. ,,ահա ես գտայ ինձ համար լաւ խոհանոց և սեղանատուն,, մտածում էր նա։

Նա սկսեց մաքրել փոքրիկ աղբիւրը, դուրս տուեց նրա միջից խոտերը, փորեց մի փոքրիկ աւազան, և հազիւ մինչև արևի մայր մտնելը՝ նորա չորս կողմը քարեց։ Վերջ առաւ իւր ամանը և բարձրացաւ ճիւղի վրայ, որոց ամրութիւնը արդէն փորձել էր։ Կրկին բարձրացաւ և իջաւ, թռաւ մի ծառից միւսը, և հասաւ իւր կաղնուն։ Նա բերեց մի խոտիտ չորացած խոտ և մամուռ, որոնցից շինեց անկողին իրա համար՝ մաքրած փչակի մէջ։ Նա լսում էր՝ թէ ինչպէս իւր հարևան բուն իրա գլխին բարկացած վայ էր տալի բոյնի մէջ։ ,,Նա կամ կը գտնի իրա համար մի ուրիշ տեղ, կամ թէ կսովորի ինձ հետ

հարևանութիւն անել՝, մտածում էր Էմմին, „այս բարի կաղնին կարող է նորան էլ սիրել այնքան, ինչքան և ինձ՝“:

Տխուր չէր Էմմի համար մենակ մնալը, նա սովորել էր արդէն մենակութեան: Երբ նա ազատուեց խողերից՝ ուրախ ժամանակ էր անցկացնում: Նրա ականջը սովորեց գայլերի ձայնին, գիտէր որ նրանք անտառի մէջ են և չեն մօտենալ իրեն: Նա արդէն ընտելացել էր նրանց սովորութեան հետ: Ցերեկով և պարզ օրերը նրանք անտառի խորքերումն էլ չէին երևում, նրանք միայն գալի- էին ամպած օրերը: Երբեմն գալիս էին Էմմի ետևից, բայց նա յետ էր դառնում և իւր դանակը երբ խփում էր երկաթին, որից մի ձայն էր դուրս գալիս, որ շատ նման էր հրացանի ձայնին, նրանք իսկոյն փախչում էին: Իսկ ինչ վերաբերում է վարազներին, Էմմին լսել էր նրանց անունը մի քանի անգամ, բայց երբէք իրանց չէր տեսել. այս կենդանիները ո՛չ մի ժամանակ իրանք չեն յարձակվում առաջին անգամ:

Երբ շականակները հասան, Էմմին հաւաքեց իրա համար պաշար, որ պահեց մի ծառի փչակում իւր կաղնուն մօտիկ, բայց մկները տեղն իմանալով՝ մեծ մասը կերել էին: Նա ստիպվեց պահել աւազի մէջ, որովհետև այնտեղ առանց փչանալու մնում էր մինչև գարունք: Էմմին ունէր շատ զանազան տեսակ կերակուրներ: Նա կարող էր գիշերով գնալ դաշտը, հանել գետնախնձոր և շաղգամ, բայց այս նշանակում էր գողութիւն անել, որը շատ հակառակ էր նրան: Նա ժողովեց շատ լոբի, չինեց ձիու մազերից թակարդ (թալակ) թռչուններ բռնելու. ժողովեց բաւականին ոչխարի բուրդ և իրա համար բարձ չինեց: Հովիւները կարող են ամեն բանից օգուտ քաղել և նրանց համար ո՛չ մի բան ի զուր չէ կորչում. նա երբեմն չինում էր ճախարակ և սովորում էր մանել. չինեց մի նիզակ փչացած երկաթէ վանդակներից, բայց մի ուրիշ տեղ բարակ երկաթէ ձող (մաֆտուլ) ևս գտաւ և չինեց թակարդ նապաստակ բռնելու համար: Այսպիսով Էմ-

մին կարողանում էր գործել իրա համար գուլբաներ և ճարել միշտ միս կերակրի համար։ Նա դարձաւ մի լաւ որսորդ, գիշեր և ցերեկ լաւ զննելով թռչունների սովորութիւնները։ Գնում էր անտառի մէջ և երբեմն շատ հեռանում էր իւր կաղնուց ու բռնում էր շատ կենդանիներ իւր թակարդով։ Եւ այսպէս ապրում էր առանց մսի պակասութիւն զգալու։

Նա ունէր բաւականին հաց, որովհետև մի աղքատ ապուշ պառաւ սովորութիւն էր արել իւրեան համար, որ ամեն շաբաթ անց էր կենում այդ տեղից, հանգստանում էր այստեղ և հեռանալու ժամանակ՝ թողնում էր մի կտոր հաց։ Էմմին սպասում էր նրան և գլուխը ծածկած այծի մորթով, ցած էր գալիս ծառից և տալիս էր նրան իւր որսածներից մի բան նորա հացի փոխանակ։

Վախենո՞ւմ էր նա արդեօք Էմմիից, թէ չէ՝, այդ ո՛չ ոք չգիտէ, միայն իւր վախը յայտնվում էր մի անտեղի ծիծաղով, որ իրեն շատ ձեռնտու էր։

Այսպիսով անցաւ ձմեռը, որ այս երկրում սաստիկ չէ լինում և եկաւ տաք ու շոգ ամառը։ Էմմին առաջին անգամ շատ էր վախենում կայծակից, որովհետև կայծակը շատ անգամ էր խփում իրա մօտիկ ծառերին։ Նա նկատեց, որ իր շատ անգամ կայծակից խփված կաղնին չունէր այլ և սրածայր գլուխ, այլ՝ շատ ճիւղեր, որոնք բունի հետ միասին կարծես մի հովանոց լինէին. դրանք ընդունակ չէին ելեկտրականութիւնն ընդունելու, ինչպէս միւս բարձր գլուխ ունեցող ծառերը, այդ պատճառով՝ նա սկսեց գիշերները հանդիստ քընել նոյն իսկ որոտման ժամանակ։ այնպէս, իր հարևան բուն։

Էմմին այս մենակութեան մէջ զբաղուած էր զանազան գործերով-նա մտածում էր անդադար իր ապրուստի և իր ազատութեան վերայ և այս պատճառով նրա օրերը տխուր չէին անցնում։

Ուրիշները նրան գուցէ ծոյլ անվանէին, բայց իրան լաւ յայտնի էր, որ այս-

պէս մենակ ապրելովը անտառի մէջ աւելի գործ էր կատարում, քան թէ ագարակում. և ո՛ւրբան նա այնպէս միայն և պանդուխտ մնաց անտառի մէջ, այնքան նրա վիճակը լաւացաւ և այնքան նա սկսեց նոր-նոր բաների վերայ մտածել։ ,,Կարելի՞ է արդեօք միշտ ապրել անտառի հաշուով, չը ծառայել ոչ ոքի և չանել ոչ մի բան յօգուտ իւր ազգականների՝՝։

Նա մտաբերեց իւր բարեկամ ապուշ պառաւ Կատիշին, որը ամենայն ժամանակ բերում էր իրան համար հաց իւր ստացած նապաստակների և արտուտների փոխանակ։ Որովհետև այս պառաւը խելագար էր, չէր խօսում, ուրեմն և ոչ ոքի չէր յայտնի, որ տեսել է իրեն, այդ պատճառաւ սկսեց առանց վախենալու՝ բաց անել իւր երեսը և խօսել նրա հետ։

Երբ պառաւը տեսնում էր Էմմիին ծառից ցած իջնելիս, սկսում էր ծիծաղել և յայտնել իւր ուրախութիւնը։ Էմմին նկատեց զարմացած, որ նա էլ է բաւական. նա չէր

խօսում, բայց երևում էր, որ շատ ուրախ էր՝ երբ տեսնում էր, թէպէտ խեղճ ու աղքատ մարդ, ինչպիսին էր Էմմին, որ սովոր էր ապրել միայնակ, այնու ամենայնիւ մխիթարութիւն էր զգում։

Մի անգամ պառաւը յիմար ձևանալով՝ Էմմին սկսեց խօսել և հարցրեց նրա բնակութեան տեղը։

Յանկարծ թողեց իւր ծիծաղը և ասաց.

,,Կամենո՞ւմ ես դու ինձ հետ գալ՝՝։

,,Ո՞ւր՝՝

,,Իմ տունը։ Եթէ դու ցանկանաս ինձ որդի լինել, ես քեզ կը բաղդաւորեմ և կը հարստացնեմ՝՝։

Շատ զարմացաւ Էմմին, երբ լսեց Կատիշի այս խելօք և իմաստուն խօսքերը, էնպէս որ ստիպեց նրան հաւատալ. քամին սաստիկ շարժում էր ծառի ճիւղերը, այդ պատճառով կարծես նա լսեց կաղնու ձայնը որ ասում էր. ,,մի՛ գնար՝՝։

,,Մնաս բարով՝՝ ասաց նա պառաւին, ,,ցանկանում եմ քեզ բարի ճանապարհ, իմ

կաղնին չէ կամենում, որ ես հեռանամ իւրեանից՝՝:

՝՝Քո կաղնին յիմար է՝՝, ասաց նա. ՝՝կամ աւելի լաւ դու ինքդ ես յիմար, որ հաւատում ես՝ թէ ծառերը խօսում են՝՝:

՝՝Դուք կարծում էք թէ ծառերը չե՞ն խօսում: Շատ սխալվում էք՝՝:

՝՝Ամեն ծառ էլ խօսում է, հենց որ փչում է քամին, բայց նրանք չեն հասկանում՝ թէ ինչ են խօսում, այնպէս որ մի և նոյն է թէ չեն խօսում՝՝:

Էմմին շատ նեղացաւ այս բանի վերայ և չէր հաւատում: Նա պատասխանեց Կատիշին: ՝՝Դուք սուտ էք խօսում, պա՛ռաւ, եթէ բոլոր ծառերն էլ այնպէս վարվեն ինչպէս դուք, իմ կաղնին նրանցից չէ, նա գիտէ թէ ինչ է կամենում և ինչ է ուզում ասել՝՝:

Պառաւը ուսերը վեր քաշեց. առաւ իւր պարկը և հեռացաւ՝ ծիծաղելով նորա վերայ:

Էմմին մտածում էր ինքն իրան, թէ երբ պէտք է թողնէ դա արդեօք իւր յիմարութիւնը և խելօք կերպով խօսէ:

Էմմին սպասեց մինչև որ պառաւը փոքր ինչ հեռացաւ, յետոյ անցաւ մի ծառից միւսը և հետևեց նրան, այնպէս որ նա չը նկատեց այս բանը: Նա գնում էր հանդարտ, գլուխը կախ արած, շրթունքները կիսաբաց, այնպէս որ միայն իւր առաջ եղած բաներն էր տեսնում: Թէև պառաւը դադրած էր, այնուամենայնիւ բաւական շուտ շուտ էր գնում: Այսպէս շարունակ երեք ամբողջ ժամ ճանապարհորդելով, հասաւ մի աղքատ գիւղի, որ չինված էր բլրի վերայ և որի ետևը տարածվում էր մի ընդարձակ անտառ, որ մարդու աչքը հազիւ էր կտրում տեսնել նրա ծայրը:

Էմմին տեսաւ՝ թէ ինչպէս նա մտաւ մի փայտէ խրճիթ, որի մօտ չինած էին մի քանի նրա նման խրճիթներ. նրանք ոչնչով չէին զանազանվում միմիանցից. նա չը վստահացաւ անտառից դուրս գալ, այլ յետ դարձաւ՝ մտածելով որ կատիշը կունենայ իրա համար առանձին տուն և թէ նրա տունը աւելի անշուք և աղքատ կը լինի, քան թէ

իւր խօսող կաղնու փչակը։

Էմմին դադրած՝ երեկոյեան յետ դարձաւ տուն և շատ բաւական էր, որ իրա տան մէջն էր։ Այս ճանապարհորդութիւնն անելով նա իմացաւ թէ ինչքան տարածութիւն ունէր անտառը և ինչքան հեռու էր մօտիկ գիւղը իւր կաղնուց։ Այս գիւղը աւելի աղքատ երևաց Էմմին իւրեանց գիւղից։

Այդ կողմերում չը կար մի այնպիսի գիւղ, ուր բնակվելիս լինէին լուսաւորված մարդիկ։ Դաշտերը ծածկված էին սպիտակ ծաղիկներով. իւր տեսած կենդանիները այնքան լաղար էին, որ կարելի էր նրանց կողքի ոսկորները մատներով համարել։ Միայն հեռու՝ հորիզոնի կողմում երևում էր մի մութ անտառ։ Այսպէս նա չը կարողացաւ գտնել իւր այս ճանապարհորդութեան մէջ ոչ մի տեղ, որ այնպէս գեղեցիկ լինէր, ինչպէս իւր կաղնու չորս բոլորը։

Պառաւ Կատիշը երևեցաւ սովորական ժամին։ Նա վերադառնում էր Սեռնասից։ Էմմին հարցրեց նրան, թէ ի՞նչպէս է իւր

հօրաքոյրը, որովհետև ուզում էր իմանալ, թէ կը խօսէ՞ արդեօք պառաւը իրա հետ այնպէս, ինչպէս վերջին անգամը՝ թէ ոչ։ Պառաւը պատասխանեց նրան խելացի կերպով։

„Մեծ Նանետտան (հօրաքոյրը) երկրորդ անգամ մարդու է գնացել և եթէ դու ուզենաս նրա մօտ գնալ, նա քեզ կը սպանէ որ քեզանից ազատուէ“։

„Ճշմարի՞տ էք ասում“, ասաց Էմմին։

Այո՛, ճշմարիտ է, քեզ մնում է միայն երկու բան-կամ պէտք է վերադառնաս քո առաջուայ պարոնի մօտ և խոզերի հետ ապրես կամ թէ պէտք է դաս ինձ հետ հաց ճարելու և այս բանը քեզ համար շատ լաւ կը լինի։ Անկարելի է միշտ անտառում ապրել։ Անտառը ծախված է և հաւանական է, որ հին ծառերը կը կտրատեն։ Քո կաղնին էլ նրանց հետ կը կտրուի։ Հաւատա՛ ինձ, ա՛յ տղայ, չէ կարելի ապրել առանց աշխատելու. գնանք ինձ հետ. ես ու դու միասին շատ փող կ՚աշխատենք, իսկ երբ ես կը մեռնեմ՝ բոլորն էլ քեզ կտակ կանեմ“։

Էմմին, երբ լսեց ապուշի այսպիսի խելօք խօսքերը, շատ զարմացաւ և սկսեց ականջ դնել՝ թէ ինչ կասէ իրան արդեօք իւր հաւատարիմ կաղնին։

,,Մի նեղացրու այդ խեղճ կաղնուն ,,ասաց Կատիշը'' ,,մի՛ յիմարանալ, արի գընանք ինձ հետ''։ Ծառը ոչինչ չը խօսեց, այդ պատճառով Էմմին գնաց նրա ետևից և ճանապարհին սկսեց պառաւը պատմել իւր գլխի անցածը։

,,Ես ծնուել եմ մի շատ հեռու երկրում, աղքատ և որբ, ինչպէս և դու'', ասաց նա։ ,,Ես մեծացել եմ աղքատ և իմ կեանքը թշուառ է անցել։ Ես էս քեզ պէս խոզեր էի արածացնում և շատ վախենում էի այդ անիծածներից։ Քո անգքը իմ գլխովս էլ է անցել-ես էլ մի անգամ խոզ արածացնելիս՝ անց էի կենում մի փթած կամուրջի վերայով, յանկարծ սլքվեցայ և ջուրն ընկայ ու այնտեղից քաշ տալով հանեցին ինձ կիսամեռ։ Ինձ տարան մի բարի բժշկի մօտ և ես երբէք չեմ մոռանայ նրա արած լա-

ւութիւնը, որովհետև ինձ նոր կեանք տուեց։ Հենց էն օրից սկսած՝ այս դժբաղդութիւնը ինձ պատահեց ու դարձայ ապուշ, խուլ և սկզբում համարեա՛ չէի կարողանում խօսել։ Նա ինձ պահեց իրա մօտ և որովհետև ինքն աղքատ էր, այդ պատճառաւ ծխական քահանան ստորագրութիւն բացեց ինձ համար և ես սկսեցի ամենքից ողորմութիւն խընդրել։ Բարի տիկինները տալիս էին շորեր, գինի, քաղցրեղէն և ամեն բան, ինչ որ ինձ հարկաւոր էր։ Ես սկսեցի առողջանալ և ինձ լաւ էին պահում։ Իմ ախորժակս բաց էր. խմում էի քաղցր գինի. իմ սենեակում կրակը վառ էր. ապրում էի ինչպէս թագուհի/ և իմ բժիշկը ինձանից չնորհակալ էր լինում։ Նա ասում էր ուրիշներին. ահա այժմ հասկանում է, ինչ որ իրան ասում են, կարողանում է ասել, ինչ որ ուզում է։ Երկու, երեք ամսից յետոյ նա կարող է աշխատել և երեսի քրտինքով իրա գլուխը պահել։ Բայց տիկինները վիճում էին միմեանց հետ, թէ որի մօտ պէտք է լինեմ։ Ես շատ

հեշտ կարող էի ինձ համար տեղ գտնել, երբ առողջացայ. բայց բանն այն էր, որ չէի սի-
րում աշխատել և այդ պատճառով ամենքն էլ ինձանից անբաւական էին։ Ես ցանկա-
նում էի լինել աղախին, բայց չը գիտէի ո՛չ կարել և ո՛չ լուանալ։ Ես թողի այդ տեղը այն մտքով,
որ կարող եմ դորանից մի լաւը գտնել։ Բայց ափսո՜ս, որ այդպէս չեղաւ-ինձ հայհոյում էին,
կեղտոտ և ծոյլ էին անվանում։ Էլ չկա՜ր իմ ծեր բժիշկը, որ պաշտպանէր ինձ, նա
վաղուց մեռել էր։ Ինձ հալածում էին մի տանից միւսը և այս բանից յետոյ, երբ ա-
մենքը ինձ յիմարի տեղ էին ընդունում, ես ստիպուած թողի այդ երկիրը և սկսեցի
ողորմութիւն հաւաքել։ Բաղդի հետ ես ըս-
կըսեցի վարվել, բայց այնքան քիչ ողոր-
մութիւն էին տալիս, որ հազիւ թէ նրանով
կարելի լինէր կերակրվել։ Իմ հասակիս և
առողջութեանս նայելով՝ ինձ յարմար էին
համարում արդէն գնալ և ողորմութիւն հա-
ւաքել. այդ պատճառով ինձ ասում էին.
գնա՛ աշխատելու, ծո՛յլ, շատ ամօթ է քո

պէս մարդու համար վազվզել փողոցներում,
երբ դաշտերի քարերը մաքրելով, կարող ես
ստանալ վեց սու մի օրում։ Այն ժամա-
նակ ես դիտմամբ սկսեցի կաղալ, որ նրանք
կարծեն՝ թէ ես չեմ կարող աշխատել, բայց
չը յաջողեց, ըստ որում նրանք հասկացան։
Ես յիշեցի իմ ապուշ ժամանակն, երբ բո-
լորը ինձ վերայ ցաւում էին. ես սկսեցի էլի
առաջուայ պէս վարվել. կերպարանքս փո-
խում էի և խօսելու փոխանակ սկսում էի
ծիծաղել և այնպէս ձևացնում էի ինձ, որ
ամենքն էլ խղճում էին և հաց ու փող էր,
որ լքցվում էր իմ պարկը։ Քառասուն տա-
րի է ահա՛ ինչ որ ես այսպէս ապրում եմ,
ոչ մէկը իւր երեսը ինձնից չը դարձրեց։ Ով
չունէր փող, տալիս էր պանիր, մրգեղէն, հաց
և այնքան ժողովում էի, որ հազիւ կարո-
ղանում էի տուն բերել։ Ես պահում եմ
շատ հաւեր և կերակրում եմ նրանց այդ ա-
ւելորդ փշրանքներով. յետոյ ուղարկում եմ
փողոցը և շատ լաւ գնով ծախվում են։ Ես
գիւղում ունիմ մի լաւ տուն, ուր քեզ այժմ

տանում եմ, թէև այդ երկիրը պտղատու չէ, բայց միջի մարդիկը բարի են։ Մենք ամենքս էլ աղքատ հաշմանդամ ենք։ Ամենքս էլ թափառում ենք երկրէ երկիր, բայց առաջուց մտածում ենք՝ թէ ո՛վ որ կողմը պէտք է գնայ, որպէս զի միմեանց չը պատահենք։ Մեզանից ամեն մէկը այնպէս է բռնում իւր բանը, ինչպէս իւր սիրտն է ուզում, բայց ո՛չ ոք չէր կարողանում այնպէս անընդունակ ձևացնել իրան աշխատելու, ինչպէս ես"։

„Այո՛, ես երբէք չէի կարծում՝ թէ դուք կարող էք խօսել", ասաց Էմիլին։

„Այո՛, այո՛, աղաղակեց ծիծաղելով Կատիշը, „դու ուզում էիր ինձ խաբել և վախեցնել, երբ գլուխդ այծի մորթով ծածկածցած էիր գալիս քո ծառից, որ քեզ համար հաց ստանաս։ Ես այնպէս էի ձևանում, իբր թէ քեզանից վախենում եմ, բայց քեզ լաւ էի ճանաչում և ինձ ու ինձ ասում էի. ա՛յ անբաղդ տղայ, կը գայ մի գեղեցիկ օր, որ դու կը գաս Ուրսին-Էբուա և ուրախ-ուրախ

մի կտոր հաց կուտես իմ աղքատ սեղանից"։

Այսպէս խօսելով միմեանց հետ Կատիշը և Էմիլին՝ հասան Ուրսին-Էբուա։ Այս այն գիւղն էր, ուր բնակվում էր խաբեբայ ապուշը և որին Էմիլին արդէն տեսել էր։

Ո՛չ մի մարդ չէր երևում այս խեղճ գիւղի մէջ։

Կենդանիները թափառում էին կառերով (черта полохъ) ծածկուած դաշտի մէջ։ Փողոցների վերին աստիճանի անմաքրութիւնը, մօտիկ տներից տարածուած զզուելի հոտը, թփերի վերայ փռած անմաքուր սպիտակեղէնները, փտած ծղոտէ կտուրները, որոնց վերայ բուսած էր եղինջ-այդ ամենը ներկայացնում էին գիւղական կեանքի անհոգ ու պակասաւոր կողմերը և զզուանք էին պատճառում Էմիլին, որ մեծացել էր կանաչ մարգագետիններում և անուշահոտութիւն բուրող անտառների պարզ ու անոյշ օդի մէջ։

Այսու ամենայնիւ նա գնաց պառաւի ետևից մինչև նրա խրճիթը, որը աւելի նման էր մի խոզանոցի, քան թէ մարդու բնակարանի։

Տան ներսի կողմը բոլորովին ուրիշ ձև ունէր-պատերը ծածկուած էին փսեաթով, անկողնի վրայ կար մի լաւ մահիճ (դոշակ) և մի բրդէ վերմակ (լեհեր)։ Ամեն տեսակ պաշարեղէններով լիքն էր տունը,-հաց, խոզի իւղ, ընդեղէններ, մի տակառ լիքը գինի և մինչև անգամ կնքած շիշեր, իսկ յետևի բակում ունէր շատ լաւ չաղ հաւեր։

,,Տեսնում ես, Էմմի, ես քո հօրաքրօջից հարուստ եմ'', ասաց Կատիշը, ,,նա ամեն շաբաթ ինձ ողորմութիւն է տալիս, բայց եթէ ես ուզենամ, կարող եմ նրանից աւելի լաւ շորեր հագնել։ Կը կամենաս տեսնել իմ պահարանը։ Գնանք, տե՛ս. գիտեմ դու քաղցած էլ կը լինես, ես քեզ կ'ուտացնեմ մի այնպիսի արգանակ (սուպ), որ դու քո կեանքիդ մէջ կերած չը լինես''։

Յետոյ, քանի որ Էմմին նայում էր նրա պահարանին, պառաւը կրակ վառեց և հանեց իւր տոպրակից մի այծի գլուխ և ըսկըսեց խորովել։ Նա սեղանի վրայ դրեց նոյնպէս աղ, իւղ, կանաչի և մրգեղէններ, որոնք

հաւաքել էր վերջին անգամ անտառում։

Նա պատրաստեց այս բոլորից մի տեսակ կերակուր, որ Էմմին զարմանալով կերաւ, իսկ վերջը նրան մի շիշ գինի ևս խմեցրեց։ Նա երբէք գինի չէր խմել և այդ պատճառով դուր չեկաւ, բայց այսուամենայնիւ նա խմեց և որպէս զի օրինակ տայ նրան, պառաւը ինքն էլ խմեց մի ամբողջ շիշ, հարբեց և այլ ևս չէր ամաչում։ Նա պարծենում էր, որ խելօքութիւնով գողութիւն անելը լաւ է ողորմութիւն հաւաքելուց և մինչև անգամ, որպէս ապացոյց ցոյց տուեց նրան վառարանի տակ պահած մի քանի տոպրակ ոսկին։

Այս փողերը երկու հազար ֆրանկից պակաս չէին. բայց Էմմին որովհետև չը գիտէր համարել, այդ պատճառով չը կարողացաւ գնահատել նրանց արժանաւորութիւնը, ինչպէս պառաւն էր ցանկանում։ Այս բոլորը ցոյց տալուց յետոյ, ասաց պառաւը. ,,Հիմայ կարծեմ դու էլ չես գնայ իմ մօտից։ Ինձ մի տղայ է հարկաւոր և եթէ դու ցանկա-

նաս ինձ ծառայել, ես քեզ իմ ժառանգ կը չինեմ՚՚։

՚՚Շնորհակալ եմ, աղքատութիւն չեմ անիլ՚՚ պատասխանեց տղան։

՚՚Ուրեմն դու գողութի՞ւն պէտք է անես ինձ համար՚՚։

Էմմին քիչ էր մնացել որ բարկանար, բայց պառաւը խօստացաւ նրան տանել Մաւվէր, որտեղ պէտք է լինէր տօնավաճառ (եարմրկայ) և որովհետև նա ցանկանում էր տեսնել այդ երկիրը, ուր մի բարի մարդու մօտ գուցէ կարողանար արդար հաց ճարել, այդ պատճառով պատասխանեց առանց բարկանալու. ՚՚Ես գողութիւն անելու շնորհք չունիմ, այդպիսի բաներ չեմ սովորել՚՚։

՚՚Սուտ ես խօսում, աղաղակեց Կատիշը, դու շատ յաջողակ ես կարողանում ձեռք բերել անտառում քո որսը և պտղէղէնը։ Դու կարծում ես թէ այդ բաները ոչ ոքի չեն պատկանում։ Մի՞թէ դու չը գիտես թէ նա, որ չէ աշխատում, ապրում է ուրիշի հաշտվ։ Այդ անտառը շատ ժամանակ է

ինչ անտէր է, դրա տէրը մի ծեր հարուստ մարդ էր, որ ոչ մի պարապմունք չունէր, ուշք չէր դարձնում մինչև անգամ նրա պահպանութեան վերայ։ Այժմ որովհետև նա մեռել է, այս բոլորն էլ կը փոխուի և դու որ թագ ես կենումմկան պէս քո բունի մէջ, դուրս կանեն քեզ և բերդը կը տանեն՚՚։

՚՚Ուրեմն ինչո՞ւ համար ինձ գողութիւն ես սովորցնում՚՚, հարցրեց Էմմին։

՚՚Այն պատճառով, որ դու երբ լաւ կը սովորես այդ արհեստը, այն ժամանակ չես բռնուիլ։ Դրա վրայ մտածելը ուշ է, մենք պէտք է վաղը շուտով վեր կենանք և ճանապարհ ընկնենք դէպի տօնավաճառ։ Ես կը պատրաստեմ քեզ համար կողինք արկղի վերայ, մահիճդ աղուամազից (բմբուլ) կը լինի, իսկ վերմակդ՝ փափուկ և այնպէս քաղցր կը քնես, որ քո օրումդ տեսած չը լինես՚՚։

Էմմին չը համարձակվեցաւ հակառակել։ Երբ պառաւ Կատիշը չէր ձևանում իբրև ապուշ, այն ժամանակ նորա կերպարանքի վերայ նկատվում էր մի զարմանալի փոփո-

խութիւն։ Նա պառկեց։ Սկզբում շատ զարմացաւ, որ այդպէս հանգիստ էին անցնում նրա րոպէները. երկար չը քաշեց այս հանգստութիւնը և նա կրկին իւր առաջուայ վիճակի մէջն էր։ Այն աղուամազէ մահիճը կտրում էր նրա շունչը. վերմակը, օդի պակասութիւնը, խոհանոցի անախորժ օդը և խմած գինին՝ նրա մէջ ջերմ յառաջացրին։ Նա վեր թռաւ տեղից և ասաց, որ ցանկանում է դուրսը քնել. նա կը մեռնէ եթէ գիշերը անցկացնէ այս փակած տեղում։ Ոչ ոք չկար. Կատիշը խորը քնած էր, իսկ դուռը փակած։ Վերջը Էմին վճռեց սեղանի վրայ քնել՝ այստեղ նրա միտն ընկաւ իւր մամուռէ անկողինը ու ծառի փչակը։

Միւս առաւօտ Կատիշը յանձնեց նրան մի զամբիւղ ձու և վեց հատ հաւ ծախելու և պատուիրեց միևնոյն ժամանակ, որ գայ իւր ետևից և այնպէս ձևանայ, որպէս թէ իրեն չէ ճանաչում։

„Եթէ իմանան, որ այդ հաւերը իմն են, ողորմութիւն չեն տայ ինձ, ասաց պառաւը

և նշանակեց ձուերի գինը, թէ ի՞նչպէս պէտք է ծախէ ամեն մէկը“։ „Ես քո ետևից միշտ կը գամ և չեմ թողնի իմ աչքիցս հեռանաս, միայն զգոյշ կաց, որ բոլոր փողերը ինձ տաս, եթէ պակաս բերես, ճնացածը քեզանից կը ստանամ“։

„Եթէ ինձ չէք հաւատում, դո՛ւք տարէք ծախելու և ինձ թո՛յլ տուէք, որ տուն գընամ“, պատասխանեց Էմին սաստիկ նեղացած։

„Դու մի՛ մտածիր, որ փախչելով կարող ես ազատուել, ասաց պառաւը. ես ամեն տեղ կը գտնեմ քեզ, մի՛ հակառակվիր, արա՛, ինչ որ ասում եմ“։

Էմին լսեց պառաւին և գնաց նրա ետևից։ Ճանապարհի վրայ նա տեսաւ շատ աղքատներ շարված՝ մէկը միւսից աւելի խեղճ և օգնութեան կարօտ։ Դոքա Ուրսինի բնակիչներն, որ գնացել էին ամբողջ գիւղով կենդանութեան աղբիւրը բժշկուելու։ Այդ գիւղացիք համարեա՝ ամենքն էլ հիւանդ էին. մէկ քանիսի ոտներն էին թուլա-

ցել և մէկ քանիսի մարմինը ծածկուած էր վերքերով։

Աղբիւրից ամենքն էլ վերադառնում էին ողջ և առողջ։ Այս մի հրաշք է, որ դըժուար չէ բացատրել-նրանց բոլոր հիւանդութիւնները հնարովի էր. երբ անցնում էր մի քանի շաբաթ՝ կրկին հիւանդանում էին, որպէս զի եկող տօնի ժամանակ նորից գընան այնտեղ առողջանալու։

Էմմին ծախեց իւր հաւերն ու ձուանները. իսկոյն փողերը տուեց պառաւին և յետ դարձնելով երեսը նրանից՝ զարմացած սկսեց նայել ամենայն կողմ։ Նա տեսաւ թէ ինչպէս ղամբաղները զարմանալի աչքակապութիւններ էին անում, բայց երբ լաւ նայեց և տեսաւ նոցա պլպլուն վարտիկները և ոսկով զարդարած կապոցները, աւելի ևս զարմացաւ։

Այդ միևնոյն միջոցին նա լսեց մի անսովոր խօսակցութիւն։ Դա Կատիշի ձայնն էր, որը խառնվել էր ղամբաղների գլխաւորի կոպիտ ձայնի հետ։ Նրանք միմեանցից բաժանվում էին վրանի կտաւով։ Եթէ դուք նրան

մի չիշ գինի տաք, կարող էք ամեն բանը իմանալ, ինչ որ ձեզ հարկաւոր է, ասաց պառաւը։ Այդ յիմարը, որ ոչ մի բանի պիտանի չէ ինձ, այս մի ամբողջ տարի է ինչ որ ապրում է ծառի փչակի մէջ, կապկից արագաշարժ է և այծից էլ թեթև. դուք կարող էք նրան սովորցնել ամեն տեսակ աչքակապութիւն։

„Փող սիրո՞ւմ է նա՝ թէ ոչ։

„Այդպիսի բաների վրայ երբեք չէ մըտածում։ Դուք կերակրեցէք նրան և չը կարծեմ նրա խելքը կտրէ աւելի բան պահանջել ձեզանից։

„Եթէ կամենայ փախչե՞լ։

„Է՜հ, դուք հասկացրէք նրան, որ այդ անկարելի բան է։

„Բերէք ինձ մօտ, ես ուզում եմ նրան տեսնել։

„Քսան ֆրանկ կը տա՞ք ինձ։

„Կը տամ եթէ հաւանեմ։

Կատիշը դուրս եկաւ խրճթից և չտապեց դէպի Էմմին. երես երեսի կանգնեց

նրա դէմ և մատով նշան արեց իրա ետևից գալ։

,,Ո՛չ, ես լսեցի ձեր խօսակցութիւնը, պատասխանեց Էմիլին, ես այնքան յիմար չեմ, ինչքան դուք կարծում էք. ես չեմ գնայ այն մարդկանց մօտ, որ ծեծեն ինձ՝՝։

,,Դու լաւ կը գնաս՝՝, ասաց Կատիշը, և բռնեց նրա ձեռքը ու քաշ տուեց դէպի խրճիթը՝՝։

,,Ձեմ ուզում չէ՝՝ աղաղակեց երեխան և հեռացաւ նրանից։ Նա պինդ բռնեց իւր մօտ կանգնող մարդու փեշերից, որ ներկայ էր այս տեսարանին։ Այս մարդը յետ դարձաւ և հարցրեց Կատիշին. ,,Քո՞նն է այդ երեխան՝՝։

,,Ո՛չ, դա՝ ո՛չ իմ մայրս է և ոչ իմ ազգականներից մէկը, նա ուզում է ինձ փողով ծախել ջամբազների վերայ՝՝ ձայն տուեց երեխան։

,,Դու չե՞ս ուզում։

Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում, ինձ աղատեցէ՛ք նորա ձեռքից, տեսնում էք ի՛նչպէս պինդ սեղմում է իւր եղունգներով իմ ձեռքը, քիչ է

մնում արիւն դուրս գայ՝՝։

Այդտեղ կանգնած էր մի գեղեցիկ ու բարձրահասակ ժանդարմ Էրամբէր անունով. դա շատ խղճաց Էմիլի վրայ, երբ տեսաւ, որ պառաւը այնպէս նեղացնում է նրան. ,,ի՞նչ կար, ի՞նչ է պատահել այդ երկուսին՝՝, հարցրեց ժանդարմը մօտիկ կանգնող մարդուն։

,,Ոչինչ, պատասխանեց գիւղացին, որի փեշից Էմիլին դեռ ևս բռնած ունէր. պառաւը կամենում է ծախել երեխային այս ջարախաղներին, բայց նրան չեն թողնիլ իրա ուզածն անել. դուք մի՛ նեղացէք, առանց ձեզ էլ բանը կը վերջանայ՝՝։

,,Ժանդարմները ամեն ժամանակ հարկաւոր են, սի՛րելիս, ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ է պատահել՝՝։

Նա հարցրեց Էմիլին. ,,տո՜, տղայ, ասա տեսնեմ, ի՛նչ է պատահել՝՝։

Կատիշը երբ տեսաւ ժանդարմին, թողեց Էմիլին և կամենում էր փախչել, բայց երբ Էրամբէրը բռնեց նորա ձեռքից, պա-

ռաւը սկսեց ծիծաղել և ծամռծռութիւններ ա-
նել (կերպարանքը փոխել), որպէս թէ ա-
պուշ է։ Էմմին ուզում էր խօսել, բայց Կա-
տիշը աչքերը շուռ տուեց նրայ։ Էմմին ո-
րովհետև փոքրութիւնից էլ շատ էր վախե-
նում ժանդարմներից, այդ պատճառով ա-
սում էր ինքն իրան. ,,ես եթէ պառաւին
մեղադրեմ, Էրամբէրը իւր սրով անպատճառ
կը կտրէ նրա գլուխը''։

Էմմին խղճաց պառաւի վերայ, յետ դար-
ձաւ և ասաց Էրամբէրին. ,,խնդրում եմ,
որ թողնէք նրան, նա հանաք էր անում ինձ
հետ. ո՛չ մի չար միտք չունէր։ Ճանաչո՞ւմ
էք սորան, սա Կատիշն է, որ սիրում է իրա
խելքից դուրս բաներ անել''։

Կատիշը այնպէս խեղճ-խեղճ նայում էր
Էմմիի երեսին, որ մարդու լացը կը գար։

Այս որ տեսաւ Էմմին, խղճաց նրա
վերայ և աւելի սկսեց սուտ խօսել, որ ա-
զատէ պառաւին։ ,,Ես սորան լաւ եմ ճա-
նաչում սա Կատիշն է''։

,,Ես գիտեմ որ այդ այդպէս է'', ասաց

գեղեցիկ ժանդարմը արձակելով Կատիշին,
,,բայց չը մոռանաք, որ շատ ժամանակէ, ինչ
ես ձեր ետևից մարդ եմ գալի՝ որ տեսնեմ,
թէ ի՞նչ էք անում''։

Կատիշը փախաւ. ժանդարմն էլ հեռա-
ցաւ։

Էմմին, որ աւելի էր վախենում Էրամ-
բէրից, քան թէ պառաւ Կատիշը, դեռ ևս
բռնած ունէր հայը Վինցենտի փեշից։ Սա
մի գիւղացի էր. նրա երեսին մտիկ տալիս
մարդ ուրախանում էր, այնքան բարի և ազ-
նիւ սիրտ ունէր։

,,Հը, ի՞նչ է տղայ, ասաց գիւղացին Էմ-
միին, հիմայ է՞լ չես թողնիր ինձ։ Դու այլ ևս
մի՛ վախենար։ Ինչ ես ուզում ինձնից, ո-
ղորմութի՞ւն, փո՞ղ''։

,,Ո՛չ'' ասաց Էմմին, ,,շնորհակալ եմ, ես
այժմ վախենում եմ այս մարդկանցից և չը
գիտեմ, թէ ո՞ր կողմը գնամ։

,,Բայց դու ո՞ր ես ուզում գնալ''։

,,Ես ուզում եմ յետ դառնալ Սերնասի
անտառը մի ուրիշ ճանապարհով, որ չը տես-

նեմ Ուրսին Լէբուան՝՝։

՝՝Դու Սերնասո՞ւմն ես ապրում։ Այդ շատ լաւ պատահեց, ես քեզ շուտով այնտեղ կը տանեմ, որովհետև ինքս էլ այն անտառն եմ գնալու։ Դու միայն պէտք է իմ ետևիցս գաս։ Ես գնում եմ ընթրելու այս հովանոցը, իսկ դու այս խաչի մօտ ինձ սպասի՛ր, մինչև իմ գալը՝՝։

Էմմին տեսաւ, որ փայտէ խաչը շատ մօտ է Կատիչի խրճթին, լաւ համարեց գնալ Վինցենտի հետ հովանոցը։

Ինքն էլ սոված էր. ճանապարհ ընկնելուց առաջ պէտք էր փոքր ինչ ուտել։

Էմմին հարցրեց խոնարհութեամբ իւր բարերարին. ՝՝Արդեօք անպատուութիւն չի՞լինի ձեզ, եթէ պարկիցս հանեմ հաց ու պանիր և ուտեմ ձեր առաջ. ես թէև աղքատ եմ, բայց կարող եմ այդ ծախսը վճարել՝՝։ ՝՝Ահա՛ քեզ քսակս, վճարի՛ր երկուսիս կերակրի փողն էլ՝՝։

՝՝Սատանան ո՛չ գիտէ՝՝, աղաղակեց հայր Վինցենտը, ՝՝այ քեզ ազնիւ տղայ։ Ես չա-

փազանց սոված եմ, իսկ քո քսակումն էլ այնքան փող չը կայ, որ ես կարողանամ կըշտանալ. արի՛ և նստի՛ր այստեղ. վեր ա՛ռ փողերդ տղայ, ես այնքան ունիմ՝ որ երկուսիս էլ բաւական է՝՝։

Ճաշի վերայ Վինցենտը ստիպեց Էմմին պատմել իւր գլխի անցածը և երբ վերջացրեց, նա ասաց. ՝՝Ես տեսնում եմ, որ դու մի ազնիւ և բարեսիրտ տղայ ես, որովհետև դու չը խաբվեցիր պառաւի փողերից և նրան էլ բերդը չ՝ուղարկեցիր։ Մոռացի՛ր դու այդ պառաւին, իսկ քո անտառը մի՛ թող, եթէ դու այդպէս սիրում ես այնտեղ ապրելը։ Եթէ դու ուզենաս, կարող ես ընկեր էլ ունենալ։ Ես գնում եմ այնտեղ, որ պատրաստեմ քսան մշակի համար տեղ, որոնք պէտք է Սերնասի և Պլանշետի միջի ծառերը կտրեն՝՝։

՝՝Ի՞նչ, դուք կամենում էք անտառը կըտրե՞լ՝՝, բացականչեց Էմմին վախեցած։

՝՝Ո՛չ, մենք միայն ցանկանում ենք նրա մի մասը կտրել, որ շատ հեռու է քո կաղ-

նուց։ Ես հաստատ գիտեմ, որ հաստաբուն և հաստարմատ ծառերին ձեռք չեն տալ։ Ապահով եղի՛ր, քեզ չեն անհանգստացնիլ, բայց եթէ ինձ լսես, որդեա՛կ, կը գաս մեզ հետ աշխատելու։ Դու այնքան ոյժ չունես, որ կարողանաս կացնով աշխատել և եթէ դու արագաշարժ ես, կարող ես խուրձեր պատրաստել և հիւսել և այստեղ այնտեղ օգնել մշակներին, որովհետև նոցա հարկաւոր է մի տղայ, որ նրանց յանձնարարութիւնը կատարէ և կերակուր բերէ։ Այս բանը ես ինքս եմ յանձն առել։ Մշակներին օրով եմ վարձել, քեզ առաջարկումեմ, որ յոյսդ ինձ վերայ դնես և ասես, ի՞նչ է քո օրական վարձը։ Պառաւ Կատիշը ճշմարիտ էր ասում՝ թէ ով չէ ուզում աշխատել, նա պէտք է կամ գողութիւն անէ կամ ողորմութիւն ժողովէ, բայց որովհետև դու չես ցանկանում ոչ գողութիւն անել և ոչ ողորմութիւն հաւաքել, ուրեմն յանձն ա՛ռ այն աշխատութիւնը, որը ես քեզ առաջարկում եմ. ամեն ժամանակ այսպէս չի պատահիլ՝՝։

Այս բանը Էմմին ուրախութեամբ ընդունեց և հայր Վինցենտի խօսքերին նա անկեղծ նշանակութիւն էր տալիս։ Նա կատարում էր այն ամենը, ինչ որ հայր Վինցենտն էր ասում։ Երկուսն էլ միասին ուղևորուեցան անտառը։

Մութն էր, երբ նոքա տեղ հասան։ Հայր Վինցենտը թէև ճանապարհը լաւ էր ճանաչում, բայց այնուամենայնիւ դժուարանում էր գտնել այն տեղը, որտեղից պէտք է կտրէին ծառերը, իսկ Էմմին, որ գիշերները անտառի ամեն մի ծակ ու ծուկն անգիր գիտէր, տարաւ ուղղակի իւր ուզած տեղը աւելի մօտիկ ճանապարհով։ Նոքա գտան արդէն մշակների պատրաստած խլեանը, որոնք մի օրից առաջ էին եկել։ Այդ չինուորութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի քանի ցիցեր գետնի մէջ խրած ու ծածկած ճիւղերով և մամուռով։ Էմմին ծանօթացաւ մշակների հետ և շատ սիրելի դառաւ. նորան ուտացրին տաք արգանակ, յետոյ թողին։ Էմմին գնաց և հանգիստ քնեց։

Միւս օրը նա արդէն սկսեց սովորել՝ թէ ինչպէս պէտք է կրակ անել. ամանները լուանալ. ջուր բերել, իսկ մնացած ժամանակն օգնել մշակներին նոր խրճիթ շինելու, որովհետև ուրիշ քսան հատ փայտահատներ ևս պէտք է գային։ Հայր Վինցենտի խելքը գնում էր Լիմնիի սրամտութեան և արագաշարժութեան վերայ։ Լիմնին շատ լաւ ճանաչում էր իւր պարտականութիւնները. այն բանը, որ պէտք էր անել, նա չէր թողնում որ ասեն իրան, այլ առանց ասելու էր անում. սորա համար բոլոր մշակները ասում էին. ,,Նա ո՛չ թէ մարդ է, այլ մի բարի հոգի՛''։

Բացի իւր սրամտութիւնը և արագաշարժութիւնը, նա խոնարհ և լսող էր, այդ պատճառաւ էլ ամենքը սիրեցին նորան — ամենակոպիտ փայտահատներն էլ սիրով էին խօսում նրա հետ և խնայում էին շատ բան հրամայելու։

Հինգ օրից յետոյ Լիմնին հարցրեց հայր Վինցենտին՝ թէ կարո՞ղ է արդեօք կիւրակէ օրերը՝ որտեղ ինքն ուզում է, այնտեղ գնայ։

,,Դու ազատ ես՛'', պատասխանեց նորան բարի մարդը ,,և եթէ դու ինձ լսես, կը գնաս քո հօրաքրոջ և կամ քո հին պարոնի մօտ։ Եթէ ճշմարիտ է նա քեզ վերայ հոգ չէ տանում, այսուամենայնիւ ուրախ կը լինի, երբ որ կը լսէ, թէ դու մի կտոր հաց ես աշխատում քո քրտինքով։ Իսկ ինչ վերաբերում է կալուածատիրոջը, որից դու վախենում ես, որպէս թէ քեզ կը պատժէ, որ դու թողել ես նրա երամակը, ես քեզ հետ կը գամ, կը հասկացնեմ նորան բանի որպիսութիւնը և կը խնդրեմ, որ ներէ։ Հաւատա՛ ինձ, որդեակ իմ, որ սա լաւ միջոց է ու դու կարող ես ազատուիլ՛''։

Լիմնին շնորհակալութիւն արեց նրա բարի խորհրդի համար և ընկաւ նրա հետևից։ Հօրաքոյրը, որ կարծում էր թէ նա մեռել է, շատ վախեցաւ, երբ տեսաւ։ Լիմնին չպատմեց նրան իւր գլխի անցածը, բայց յայտնեց՝ որ ինքը աշխատում է փայտ կտրողների հետ և այլ ևս իրա համար ծանրութիւն չէ լինելու։ Հայր Վինցենտն էլ իւր կողմից հաս-

տատեց Էմիլի խօսքերը և յայտնեց, որ ինքը որդու պէս սիրում է նրան։ Նա միևնոյն բանը ասաց ագարակում, որտեղ շատ սիրով ընդունեցին և պատիւ տուին. նրանց հիւրասիրեցին հացով և գինիով։ Մեծ Նանետան եկաւ այնտեղ և իւր բարեսրտութիւնը ցոյց տալու համար՝ համբուրեց Էմիլին բոլորի առաջ. բերեց նրա համար մի քանի կտոր շոր և մի քանի գլուխ պանիր։

Էմիլին վերադարձաւ իւր ծեր փայտահատի հետ ուրախ-ուրախ և ազատուեց շատ տեսակ տանջանքներից և նախատինքներից։ Երբ նոքա լանդերից անցան, Էմիլին ասաց Վինցենտին. ,,Զը բարկանաք ինձ վերայ, եթէ ես գնամ գիշերը իմ կաղնու վերայ անցկացնելու։ Ես ձեզ խոստանում եմ, որ դեռ արեգակը չը ծագած՝ ձեզ մօտ կը լինիմ''։

,,Այո՛, ինչպէս կամենում ես'', պատասխանեց փայտահատը, ,,բայց ի՞նչ հանգստութիւն կունենաս դու այն ծառի վերայ''։

Էմիլին հասկացրեց նրան՝ որ իւր սիրտը

չի կտրվում իւր կաղնուց. նա զգում է մի տեսակ սէր և ձգտումն դէպի նա։

Ծերը ժպտաց և փոքր ինչ զարմացաւ, բայց և այնպէս պատրաստ էր հաւատալ նորան։ Նա ճանապարհ ձգեց նրան մինչև իւր ծառը և կամեցաւ տեսնել՝ թէ այդ ի՞նչպիսի ծառէ, որի մէջ նա բնակվում է։ Շատ դըժուար էր նրան բարձրանալ այդ բարձր ծառի վերայ և տեսնել այդ տեղից փչակը։ Նա դեռ ևս բաւականին դիւրաշարժ և քաջ էր, բայց երկու ճիւղի միջի անցքը նրա համար շատ նեղ էր։ Միայն Էմիլին կարողանում էր ազատ ման գալ ամեն կողմ։

,,Այո՛, այստեղ լաւ և յարմար է'', ասաց բարի մարդը՝ ցած գալով ծառից'', միայն երկար ժամանակ դու չես կարող քնել այդտեղ, որովհետև կեղեւը կը հաստանայ, ծակը կը փակուի և քո մարմինդ էլ միշտ այդպէս բարակ չի մնայ. բայց եթէ դու ուզում ես միշտ այստեղ լինել՝ ես այդ կարող եմ յարմարացնել քեզ համար''։

,,Զէ՛, չէ՛, չեմ ուզում. իմ կաղնին կըտրե՞լ և նրան մեռցնե՞լ՝՝, աղաղակեց Էմմին։

,,Նա դրանով չի մեռնիլ, ընդհակառակը եթէ նա ունէ ցնասուած տեղեր՝ կ'ուղղուի։

,,Առ այժմ մնա՛ք բարով, այդ յետոյ՝՝։

Ողբա բարևելով՝ բաժանուեցան սիմեանցից։ Ի՞նչքան ուրախացաւ Էմմին, երբ մտաւ իւր կաղնու փչակի մէջ։ Նրան այնպէս երևաց, որ մի տարի է համարեա՝ ինչ որ հեռացել է այդտեղից։ Նա մտաբերեց այն սարսափելի գիշերը, որը անց էր կացրել Կատիշի մօտ և այս խորը մտածմունքները երկար զբաղեցրին նրան։ Նա մտածում էր անդադար Ուրսին Լէբուի աղքատների վերայ, որոնք իրանց հարուստ էին համարում, որովհետև իրանց փողերը թաղցնում էին մահիճներում. ապրում էին շատ անմաքուր կերպով, այն ինչ ինքը մի տարուց աւելի կը լինէր, որ միայնակ քնում էր կանանչ պալատում, մանուշակների և ուրիշ ծաղիկների անուշահոտութեան մէջ. լսում էր սոխակների

և թռչունների երգերը, ամենայն ցաւ հեռու էր նորանից—մէկ խօսքով թագաւորի կեանք էր անցկացնում։

,,Ուրսին Լէբուի բնակիչները՝՝, ասում էր նա ինքն իրան, ,,ունին բաւականին փող, որով կարելի է չինել յարմարաւոր տներ իրանց բնակութեան համար. կարող էին այգիներ չինել և մաքուր ու առողջ օդի մէջ կենդանիներ պահել։ Բայց նրանք ծոյլ են և այդ ծուլութեան պատճառով շատ բանից զրկվում են։ Նրանք ծաղրում են այն մարդկանց, որոնք խղճում են իրանց։ Նրանք կողոպտում են աղքատներին և չարչարում են առանց խեղճ գալու։ Նրանք զրկում էին իւրեանց անձը ամենայն բանից, որպէս զի մի քանի կոպէկ կարողանան յետ ձգել և այնպէս աղքատութեան մէջ մաշվում են։ Ի՞նչ անմիտ գործ, ուրեմն հայր Վինցենտը ճշմարիտ է ասում՝ թէ աշխատանքը պահպանում և մաքրում է կեանքի զուարճութիւնը՝՝։

Լուսանալուց մի ժամ առաջ Էմմին զարթնեց և նայեց իւր չորս կողմը։ Լուսինը դեռ

ևս մայր չէր մտել. թռչունները լռում էին, և որսի գնացած բուն դեռ ևս չէր վերադարձել։ Խաղաղութիւնը գեղեցիկ բան է. դա շատ քիչ անգամ է պատահում անտառումը, որովհետև չարունակ կամ մէկը ծառի վրայ է բարձրանում, կամ թէ մի որևիցէ բան վայր է ընկնում։ Այս լռութիւնը բնական զուարճացրեց Էմիլին, երբ մտաբերեց տօնավաճառի խլացնող աղաղակները, խրճթի թխթխկոցի և թմբուկի ձայնը, թէ ինչպէս վիճում էին միմանց հետ առնողները և ծախողները, սայլերի ճռռոցը, վախլուկ կենդանիների աղաղակը, հարբած մարդկերանց անշնորհ երգերը — մի խօսքով նա մոռացաւ այն՝ ինչ որ նորան զարմացրել, զուարճացրել և վախեցրել էր։ Ի՞նչ զանազանութիւն անտառում պատահած ձայների մէջ։

Դեռ ծէգը նոր էր բացվում, երբ բարձրացաւ մի թեթև քամի և սկսեց ծրօրել ծառերի գագաթները։ Կարծես թէ կաղնին խօսում էր. „Հանգիստ եղիր, Էմիլ, հանգիստ

և բաւական, ի՛մ փոքրիկ Էմիլ“։

„Բոլոր ծառերն էլ խօսում են“ ասաց նրան Կատիշը. „ես սկզբում չէի հաւատում. դա ճշմարիտ է. դրանցից ամեն մէկն ունի իւր ձայնը, իւր սովորութիւնը, իւր տխուր կամ ուրախ բոպէները։ Բայց նրանք չը գիտեն թէ ինչ են խօսում“, մտածում էր պառաւը։ „Նա սուտ է խօսում, ծառերը կամ գանգատվում կամ ուրախանում են, թէ ինչ էին ասում ծառերը՝ նա չը գիտէր և չէր կարող հասկանալ, որովհետև իւր ուշք ու միտքը միայն վատ բաների վրայ է“։

Նշանակված ժամանակին Էմիլին վերադարձաւ պ. Վինցենտի մօտ և աշխատում էր։ Այսպէս անցկացրեց նա իւր օրերը մի ամբողջ ամառ և ձմեռ։

Ամեն շաբաթ երեկոյ գնում էր իւր կաղնու վերայ քնելու։ Կիւրակէ օրերը նա գնում էր Սերնաս փոքր ժամանակով և կրկին յետ էր դառնում իւր տուն մինչև երկուշաբթի օրը։ Նա թէև մեծացաւ, բայց մարմնով շատ նիհար մնաց. իրան շատ մաքուր

էր պահում։ Նրա կերպարանքը կենդանի էր ու գրաւիչ և այդ պատճառով էլ ամենքին սիրելի էր։ Հայր Վինցենտը սովորցրեց նրան կարդալ ու հաշուել։ Նրան գովում էին իւր ընդունակութեան համար և որովհետև նրա հօրաքոյրը չունէր որդի՝ ուզում էր իւր մօտ պահել։ Նա ընդունակ էր ամեն բանում և կարող էր միշտ օգտաւէտ խորհուրդներ տալ։ Բայց Էմիլին սիրում էր անտառը և մինչև այն աստիճան սիրահարուած էր, որ սկսեց լսել և տեսնել այնպիսի բաներ, որ ոչոք չէր նկատել։ Նա սիրում էր ձմեռուայ երկար գիշերները անցկացնել եղևնեայ անտառում։ Ձիւնով ծածկված մուք կանանչ տերևները կարծես մի գեղեցիկ և սպիտակ սրփոռոց լինէին, որոնք շարժվելով թեթև քամուց, կարծես ծածուկ խօսում էին միմեանց հետ։ Ըստ մեծի մասին Էմիլին երևում էին որպէս թէ տերևները քնած են և այս պատճառով նա նայում էր նրանց վրայ յարգանքով և երկիւղով։ Նա վախենում էր մինչև անգամ բերանը բաց անել մի խօսք ասել կամ շարժելել, որովհետև գիշերվայ այդ գեղեցիկ խաղաղութիւնը կարող էր վրդովել։ Մութ գիշերները՝ լուսին չեղած ժամանակ, երբ աստղերը փայլում էին երկնքի վերայ, ինչպէս անդամանդներ, նա իւր աչքի առաջ կարծես տեսնում էր իրա անտառի պատկերը։ Երբ եղանակը տաքացաւ, տերևները փոխեցին իւրեանց կերպարանքը, տեսնում էր թէ ինչպէս կամաց—կամաց ճիւղերից թափվում էին տերևները և թեքուելով ձիւնի վերայ, կարծես պատրաստվում էին թռչել մի ուրիշ տեղ։

Երբ աղբիւրը սառուցով ծածկուեց, նա կոտրեց նրա աչքը ջուր խմելու համար, բայց մեծ զգուշութեամբ, որպէս զի չը քանդէ այն բիւրեղեայ շինութիւնը, որ արգելում էր ջրի ընթացքը։ Նա սիրում էր նայել ճանապարհի երկայնութեամբ տարածվող ճիւղերի վերայ, որոնք ծածկուած էին եղեամով և արեգակի ծագելու ժամանակ կարծես կայծեր էին արձակում։

Պատահում էին այնպիսի դիշերներ, որ

տերևներից զրկուած անտառի ծառերը լուսաւորվում էին լուսնից որպէս սաղափ կամ երբեմն ծիրանագոյն ներկուած երկնքի ամպերի նման։ Իսկ ամառ ժամանակ՝ հաղարաւոր թռչունների զայլայլիկները կենդանացնում էին ձմեռուայ թմրած անտառը։ Նա պատերազմում էր ամեն ժամանակ կրծող կենդանիների հետ։ Շինեց իրա համար աղեղ ու-տէգ և շատ յաջողութեամբ որսում էր մկներ և թունաւոր օձեր։ Նա երբէք ձեռք չէր տալիս մողէսներին, որոնք վազվզում էին անդադար մամուռի վերայ, որովհետև իրեն վնաս չէին տալիս և նմանապէս գեղեցիկ առնէտներին, որոնք կերակրվում էին ծառերի արմատներով։

Նա սիրում էր իւր կաղնու մէջ ապրողներին և այնպէս պահպանում ու խնամում էր, որ ամենքն էլ ճանաչում և չէին փախչում իրանից։ Նա մտածում էր՝ որ սոխակը իւր գեղեցիկ երգով շնորհակալութիւն է անում իրան իւր ծագերի փրկութեան համար։ Մրջիւններին քշեց իւր տնից,

իսկ կտցահարին (ծառակտուտ) թողեց որ մնայ իւր տունը, որովհետև այս թռչունը դուրս է տալիս ծառի միջի ճեղասակար որդունքներին։ Ճիւղերի վրայից թափ էր տալի թրթռուրները և բզէզները առանց խնայելու։ Ամենայն կիւրակի օր նա զբաղուած էր իւր սիրելի կաղնին մաքրելով և եթէ նկատում էր մի որևիցէ պակասութիւն, իսկոյն հոգում էր։ Եւ իրաւ որ, ոչ մի ժամանակ այնպէս առողջ և զուարթ չէր եղել կաղնին, ինչպէս հիմայ և երբէք չէր ծածկված այնպիսի սիրուն կանաչով, ինչպէս այժմ։

Էմիլին ժողովեց փոքրիկ խոզակաղինի տունկերը և տնկեց մօտակայ տեղերում. նայում էր նրանց վերայ և չէր թողնում, որ բաղեղները փչացնեն նրանց։ Նա շատ էր սիրում նապաստակներ և այլ ևս նրանց չէր որսում կերակուրի համար։ Բարձրանում էր իւր ծառի վրայ և մտիկ էր անում, թէ ինչպէս Հոքա թռչկոտում էին, թէք ընկնում մի կողքի, յետոյ միւսի վրայ, դադրած շնորի նման և երբ մի չոր տերև չէր վայր ընկ-

նում՝ վեր էին թռչում, կանգնում և կարծես թէ մտածում էին։

Շոգ օրերին, մանդալու ժամանակ, երբ նա դադրումէր, իսկոյն բարձրանումէր պատահած ծառի վերայ և քնում։ Բայց ո՛չ մի տեղ նա այնպէս հանգիստ չէր քնում, ինչպէս իւր կաղնու մէջ։

Եկաւ վերջապէս ժամանակը, երբ Իմմին պէտք է հեռանար իւր սիրելի անտառից, որովհետև այլ ևս չը պէտք է փայտ կըտրէին անտառից։ Նա գնաց հայր Վինցենտի հետևից մի ուրիշ տեղ, հինգ մղոն հեռաւորութեամբ Ուրսին Լէբվաից, որպէս զի մի ուրիշ պարապմունք գտնի։ Այդ տեղերն Իմմին միայն տօնավաճառին էր տեսել։ Հենց այդ ժամանակից էլ նա թողել էր պառաւ Կատիշին և չը գիտէր թէ որտեղ է, մեռե՞լ էր արդեօք, թէ բանդումն էր, այդ ոչոք չը գիտէր։ Շատ աղքատներ այս ձևով կորչում էին և մարդ չը գիտէր թէ ո՞ւր։ Ո՛չ ոք դրանց չէր պտրտում և ոչ ոք չէր էլ ափսոսում։

Իմմին շատ բարի էր։ Նա չը մոռացաւ միայնակութեան ժամանակ իւր անբաղդ ապուշին, որ ամեն շաբաթ տեսնում էր իրան կաղնու մօտ հաց բերելիս։ Նա յայտնեց իւր ցանկութիւնը Վինցենտին որ ուզում է տեսնել Կատիշին։ Երկուսն էլ գնացին Ուրսին Լէբու։

Տօն օրերից մէկն էր. մարդիկ գինի էին խմում և երգում։ Երկու կին գզգզված մազերով դռների մօտ կռվում էին, իսկ երեխաները խաղումէին հոտած ցեխի մէջ, բայց հենց սրանց տեսան թէ չէ՝ երկուսն էլ փախան։ Երեխաների փախչելուց գիւղացիները իմացան՝ որ անծանօթ մարդ է եկել գիւղը։

Աղաղակը հանդարտեց, դռները փակվեցան և տանու թռչունները ահից թաքկացան թփերի մէջ։ Հայր Վինցենտը ասաց. „Դու ճանաչում ես պառաւ Կատիշի տունը. գնա՛նք ուղղակի այնտեղ“։ Մի քանի անգամ դուռը ծեծեցին, բայց ոչոք չը պատասխանեց։ Վերջապէս լսուեց մի թոյլ ձայն. „Ներս մտէ՛ք“։ Դուռը բացարին։ Գունա-

թափ և նիհար Կատիշը նստած էր աթոռի վրայ՝ կրակի առաջ, ծնկները երկու ձեռքերի մէջն առած, յանկարծ թուլացած ցած թողեց իւր ձեռքերը, բայց երբ ճանաչեց Էմիլին՝ կարծես թէ նորա երեսի վրայ մի ուրախութեան ժպիտ փայլեց։

,,Վերջապէս եկար,,, ի՛մ սիրելի Էմիլի, ասաց պառաւը, ,,հիմայ ես հանգիստ կը մեռնեմ,,։ Նա պատմեց՝ թէ անդամալոյծ է դարձել և թէ ամեն առաւօտ հարևանները գալիս են և վերկացնում անկողնից, կերակրում են նշանակված ժամերին և երեկոները պառկեցնում։ ,,Ես ոչ մի բանի վրայ չեմ մտածում,,, ասաց նա, ,,իմ հոգսը փողերս է, որ այս քարի տակն եմ պահել, ուր դրած են ոտներս։ Այս փողերը ես կտակում եմ Էմիլին. նա բարի սերտ ունի, նա աղատեց ինձ, երբ ես ուզում էի ծախել նորան ջամբազներին։ Իմ մահուանից յետոյ իմ հարևանները կը քանդեն բոլոր անկիւնները և կը գտնեն իմ գանձը. այս միտքը չէ թողնում ինձ ո՛չ քնել և ո՛չ էլ մտածել ինձ

վրայ, ինչպէս հարկն է։ Վե՛ր առ այս փողերը և տա՛ր մի ուրիշ տեղ պահի՛ր։ Եթէ ես կը մեռնեմ, բոլորն էլ քեզ լինի, ես վաղուց եմ խոստացել իմ հարստութիւնը քեզ։ Բայց եթէ բան է առողջանամ, պէտք է վերադարձնես։ Դու հաւատարիմ ես, ես լաւ գիտեմ։ Միևնոյն է այդ փողերն էլի քեզ պէտք է մնան, միայն ես շատ ուրախանում եմ, երբ սկսում եմ համրել և այդ պէտք է անեմ մինչև իմ վերջին շունչը։ Էմիլին սկզբում յանձն չառաւ։ Սոքա բոլորն էլ գողացած փողեր էին և այդ շատ հակառակ էր իրեն, բայց հայր Վինցենտը առաջարկեց պառաւին, որ իրեն տայ պահելու և պահանջած ժամանակին իսկոյն կարող է ստանալ կամ Էմիլի անունով մի որևիցէ տեղ պահել։ Նա այդ նրա համար էր անում, որ մի գուցէ պառաւին յանկարծ մահ պատահի և այդ փողերը ի զուր կորչեն։

Հայր Վինցենտը այդ կողմերում յայտնի էր ինչպէս մի արդարասէր, ճշմարտասէր և բարեխիղճ մարդ։ Կատիշը որ ամեն տեղ

մտել ու դուրս էր եկել, իւր կեանքի մէջ ամեն չար ու բարի տեսած, նորա խօսքին հաւատաց և ընդունեց։ Պառաւը խնդրեց Վինցենտին ասելով. ,,Կողպի՛ր այս պատուհի փեղկերը, դէն դի՛ր սեղանը և բարձրացրու այս վառարանի քարը, որովհետև ես տկար եմ, ոյժ չունիմ''։ Փողերը աւելի շատացել էին՝ քան թէ առաջ նա ցոյց էր տրվել Էմիլին։ Հինգ կաշուէ քսակ էր՝ մօտ հազար ոսկու։ Նա միայն երեք հարիւր ֆրանկ էր ուզում վերցնել այդ փողերից հարևաններին տալու, որ իրան մտիկ էին արել հիւանդութեան ժամանակ և նոյնպէս իւր թաղման համար, որովհետև Էմիլին խնայողական աչքով էր նայում այս հարստութեան վերայ։ Կատիշն ասաց. ,,Վերջը կը հասկանաս, որ աղքատութիւնը մի սարսափելի բան է և եթէ ես աղքատութեան մէջ մեծացած չըլինէի, այսպէս չէի վարվիլ, ինչպէս հիմայ''։ ,,Եթէ դուք զղջում էք'', ասաց Հայր Վինցենտը, ,,Աստուած կը ներէ ձեզ''։

,,Այո՛'', ասաց նա, ,,ես զղջացել եմ այն

օրից սկսած, երբ անդամալոյծ դարձայ, որովհետև տանջվում եմ ցաւի և վենակութեան մէջ։ Հարևաններս ինձ դուր չեն գալիս, ինչպէս և ես նրանց։ Ես մտածում եմ այս բոպէիս, որ աւելի լաւ կանէի, եթէ մի ուրիշ կերպ ապրէի''։

Էմիլին ասաց պառաւին. ,,Ես չեմ մոռանայ ոչ մի ժամանակ քեզ, միշտ կը գամ տեսնելու'' ու դնաց Վինցենտի հետևից նոր գործ գտնելու։ Նա շատ ու շատ ափսոսում էր իւր Սերնաս անտառի վրայ, բայց չէր մոռանում իսկի, թէ ինքն ի՛նչ պարտականութիւն ունի դէպի նա և կատարում էր։

Մի շաբաթից յետոյ եկաւ Կատիշին տեսնելու։

Երբ մօտեցաւ խրճթին, տեսաւ մի իշի պայլ կանգնած է դուրսը, իսկ տանից դուրս բերին մի դագաղ և դրին այդ սայլի մէջ ու տարան։ Էմիլին դնացնելեցեալի հետևից մինչև ծխական եկեղեցին և թաղման ներկայ եղաւ։ Վերադարձին տեսաւ որ պառաւի տանից հարևանները դուրս են բերել նորա շո-

ները և կռվում են բաժանելու վրայ։ Սրանից յետոյ, երբ տեսաւ որ պառաւի փողերն էլ եթէ մնային, այսպէս միմեանց ձեռից պէտք է խլել էին, այլ ևս չը ցաւեց, որ զրկել է նրանց այդ փողերից և ինքն է վերցրել։

Երբ վերադարձաւ, հայր Վինցենտն ասաց նրան։ ,,Դու դեռ շատ փոքր ես, չես կարող այս փողերը պահել. չես կարող նրանից օգուտ քաղել, և ո՛վ գիտէ, շատ կարելի է, գողացնել էլ տաս. եթէ դու ինձ վերակացու կը նշանակես այս փողերի վրայ, կը շահեցնեմ մինչև քո մեծանալը''։

,,Ես ձեզ անպայման հաւատում եմ, ինչպէս կամենում էք, այնպէս էլ արէ՛ք, բայց որովհետև այդ փողերը գողունովի են, թէև պառաւը պարծենում էր, որ իւր աշխատածն է, աւելի լաւ չէ՞ր լինի, որ իւրեանց տէրերին յետ դարձնէր''։

,,Ո՞ւմը յետ տալ, ո՞ւմը։ Այդ փողերը նա կոպէկ կոպէկ է գողացել, նա այդ փողերը ողորմութիւնով էր հաւաքել և այս ու

այն քարի տակ պահել, ո՞վ գիտէ ումն է։ Ի՛նչ, ո՞ւմ տալ, ոչ ոք ոչինչ չի պահանջում։ Փողերն այստեղ մեղաւոր չեն, բայց ամօթը նրանն է, ո՛վ վատ է գործ դնում նրանց։ Կատիշը անյայտ ծագումից էր, չունէր ո՛չ ընտանիք և ո՛չ մի ժառանգ։ Նա քեզ տուել է այդ փողերը ո՛չ թէ մի վատ բանի շնորհակալութեան համար, այլ ընդհակառակն նրա համար, որ դու ազատեցիր մեծ վտանգից, երբ նա քեզ ուզում էր ծախել ջամբաղներին։ Ես կարծում եմ, որ այս հարստութիւնը քոնն է և պառաւը դորանով մի շատ լաւ բան արեց իւր կեանքի մէջ։ Ես չեմ ծածկում քեզանից, այս փողերը մեծ շահ կը բերեն, այնպէս որ դու առանց աշխատելու կարող ես ապրել։ Բայց եթէ դու լաւ մարդ լինես, ինչպէս ես քեզ ճանաչում եմ, էլի կ'աշխատես այնպէս, ինչպէս առաջ, որպէս թէ ոչինչ չունես''։

,,Ես այնպէս կանեմ, ինչպէս որ դուք էք կամենում, ,,ասաց Էմիլին, ,,ես կը լսեմ ձեր բոլոր խօսքերին''։

Էմմին վերջը չը զղջաց, որ այդպիսի հաւատարմութիւն ունեցաւ նրա վրայ։ Հայր Վինցենտը վարվում էր նրա հետ որդու պէս, իսկ Էմմին հոր տեղ էր ընդունում նրան։ Երբ Էմմին մեծացաւ՝ փայտահատի թոռներից մէկի վրայ ամուսնացաւ։ Նա ձեռք չէր տալիս իւր փողերին և այս պատճառով տարէ ցտարի աւելանում էր, այնպէս որ մի քանի տարուց յետոյ, նա եղաւ ամենահարուստը այդ երկրում։ Նրա ամուսինը մի գեղեցիկ, ճարպիկ և բարեսիրտ կին էր։ Այդ երկրի մարդիկը ամենքն էլ սիրում և պատվում էին նրանց և որովհետև Էմմին իւր հարստութիւնով և խելօքութիւնով լաւ անուն էր հանել, դորա համար Սերնաս անտառի տէրը նրան գլխաւոր անտառապահ նշանակեց և չինեց նրա համար մի գեղեցիկ և փառաւոր տուն հենց իրա խօսող կաղնու մօտերում։

Հայր Վինցենտի առած խօսքերը կատարվեցան—Էմմին այնքան մեծացաւ, որ այլ ևս չը կարողացաւ տեղաւորվել իւր հին տան (ծառի փչակի) մէջ, իսկ կաղնին ծածկվեց

նոր կեղևով։ Նա հաստացաւ և ծակը համարեա թէ բռնուեց։

Էմմին երբ ծերացաւ, տեսաւ, որ ծառի ծակը բռնվում է, վեր առաւ մի պղնձի տախտակ, գրեց նրա վրայ իւր գլխի անցածը ու ձգեց փչակի մէջ, իսկ վերջը այս խնդիրքը աւելացրեց։ ,,Երկնքի կրակ (կայծակ) և սարերի քամիներ, խնայեցէ՛ք իմ կաղնուն, թո՛ղ երկար տարիներ ապրէ և տեսնէ իմ թոռներին և թոռան թոռներին։ Ի՛մ ազնիւ կաղնի, դու որ ինձ միշտ բարի խորհուրդներ էիր տալիս, իմ որդւոց և թոռներիս էլ նոյնպէս արա՛, որպէս զի նոքա էլ քեզ պատվեն և սիրեն ինձ նման''։ Այս տախտակը նա ձգեց փչակի մէջ, որտեղ ինքը շատ տարիներ քընել ու մտածել էր։

Ծառի ծակը բոլորովին բռնուեց։ Էմմին այլ ևս կենդանի չէ, իսկ ծառը դեռ ևս կայ։ Նա այլ ևս չի խօսում, բայց եթէ խօսում էլ է, չը կան այլ ևս ականջներ, որ լսեն նրա խրատին։ Նա այլ ևս ոչոքի չի վախեցնում, բայց Էմմիի պատմութիւնն ամենքը

գիտեն։ Ա՛ա այնպիսի մի անուն թողեց, որ այս ծառը մինչև այսօր էլ ամենքը սիրում ու պատվում են։

ՀՀ Ազգային գրադարան
NL0585637